

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2019թ. ապրիլի 19-ի նիստի

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 33-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Տ.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Արսեն Թավադյանին, Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտներ, ի.գ.թ. Ս.Մարաբյանին, ի.գ.թ. Ա.Հովհաննիսյանին և ի.գ.թ. Տ.Սուջյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:

2. Գիտական հաղորդում (զեկ.՝ Մարդու իրավունքների պաշտպան Ա.Թաթոյան):

3. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.Ստեփանյան):

4. 2019-2020թթ. ուսումնական պլանների հաստատում:

5. Ուսանողների սոցիոլոգիական հարցումների արդյունքների ամփոփում:

6. Հաղորդում 1-ին ընթացիկ քննությունների արդյունքների մասին:

7. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Տարոն Սիմոնյանին թեկնածուականատենախոսություն ղեկավարելու իրավունք տրամադրելու միջնորդությամբ ԲՈԿ դիմելու հարցը (բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.01-Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն):

8. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Արսեն Թավադյանին, Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտներ, ի.գ.թ. Ս.Մարաբյանին, ի.գ.թ. Ա.Հովհաննիսյանին և ի.գ.թ. Տ.Սուջյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ս.Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուների անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտամանկավարժական կոչում շնորհելու համար ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց համապատասխան ամբիոնների միաձայն

երաշխավորությունը և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը:

Խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Արսեն Թավադյանին, Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտներ, ի.գ.թ. Ս.Մարաբյանին, ի.գ.թ. Ա.Հովհաննիսյանին և ի.գ.թ. Տ.Սուջյանին շնորհել դոցենտի գիտամանկավարժական կոչում:

2. ԼՍԵՑԻՆ. Գիտական հաղորդում (զեկ.՝ Մարդու իրավունքների պաշտպան Ա.Թաթոյան):

Մարդու իրավունքների պաշտպան Ա.Թաթոյանն անդրադարձավ գործնականում քրեական հետապնդման ոլորտում առկա որոշ խնդիրների՝ կապված անմեղության կանխավարկածի խախտման, օպերատիվ տվյալների չարաշահման, մասնավորապես բացառապես օպերատիվ տվյալների հիման վրա գույքի վրա կալանք դնելու, բնակարանի խուզարկություն թույլտվություն ստանալու ոչ իրավաչափ դեպքերի հետ:

Զեկուցողն անդրադարձավ նաև կալանավորված անձի հետ տեսակցությունների արգելք սահմանելու օրենսդրական կարգավորման հետ կապված խնդիրներին՝ արձանագրելով, որ անձի համան նախատեսված այս, ըստ էության, լրացուցիչ գրկանքը, պետք է օրենսդրական կարգավորում ստանա որպես դատավարական հարկադրանքի միջոց, այլ կերպ՝ կիրառվի վարույթն իրականացնող մարմնի պատճառաբանված որոշման հիման վրա, որի պատճենը պետք է տրամադրվի նաև համապատասխան անձին, ով այդ որոշումն արդյունավետ բողոքարկելու հնարավորություն պետք է ունենա:

Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ քննարկման առարկա դարձրեց անձի իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակման հարցն այն դեպքերում, երբ ՍԵԿՏ համակարգով մեխանիկորեն արգելափակվում է ոչ միայն կասկածյալի (մեղադրյալի), այլ նաև վկայի դատավարական կարգավիճակ ունեցող անձի ելքը պետության սահմաններից, ինչի մասին անձը չի տեղեկացվում, և որպես կանոն այդ մասին իմանում է, երբ փորձում է դուրս գա երկրից: Խնդիրն ավելի է սուր է դառնում այն պաճառով, որ օրենսդրորեն կարգավորված չէ այդ արգելափակումը վերացնելու կարգը:

Զեկուցողն ընդգծեց նաև, որ գործնականում լուրջ խնդիր է փորձաքննությունն իրականացնող մարմինների ծանրաբեռնաժողովները, որով պայմանավորված՝ փորձաքննությունները բավական երկար են տևում, ինչի արդյունքում, օրինակ, անձը գրկվում է փորձաքննության ուղարկված իր գույքը տնօրինելու հնարավորությունից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ.Ս.Դիլբանդյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաղորդումն ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.Ստեփանյան):

Պրոֆ. Վ.Ստեփանյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

4. ԼՍԵՑԻՆ. 2019-2020թթ. ուսումնական պլանների հաստատում:

Դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյանը ներկայացրեց 2019-2020թթ. ուսումնական պլանները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել 2019-2020թթ. ուսումնական պլանները:

5. ԼՍԵՑԻՆ. Ուսանողների սոցիոլոգիական հարցումների արդյունքների ամփոփում:

Խորհրդի նախագահ պրոֆ. Գ.Ղազիսյանն ընդհանուր գծերով ներկայացրեց ուսանողների սոցիոլոգիական հարցումների արդյունքները՝ ընդգծելով, որ դրանք մանրամասն քննարկման առարկա են դարձվել ֆակուլտետի ղեկանատի նիստում, ինչպես նաև բոլոր ամբիոններում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Հ.Խաչիկյանը, պրոֆ. Կ.Գևորգյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

6. ԼՍԵՑԻՆ. Հաղորդում 1-ին ընթացիկ քննությունների արդյունքների մասին:

Դեկանի տեղակալ պրոֆ. Հ.Խաչիկյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց 1-ին ընթացիկ քննությունների ընթացքի և արդյունքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազիսյանը, ուսխորհրդի նախագահ Հ.Զիլավյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

7. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Տարոն Միմոնյանին թեկնածուականատենահոտություն ղեկավարելու իրավունք տրամադրելու միջնորդությամբ ԲՈԿ դիմելու հարցը (բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.01-Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան, պրոֆ. Գ.Ղազիսյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

Դիմել ԲՈԿ ԵՂՀ իրավագիտության ֆակուլտետի Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Տարոն Միմոնյանին թեկնածուական ատենախոսություն ղեկավարելու իրավունք տրամադրելու միջնորդությամբ:

8. Ընթացիկ հարցեր.

8.1 ԼՍԵՑԻՆ. ԵՂՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ Քրեական իրավունքի ամբիոնի ասիստենտ Ժ.Ստեփանյանի կազմած՝ «Նախադեպը քրեական իրավունքում» դասընթացի ծրագիրը հաստատելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազիսյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՂՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ հաստատել Քրեական իրավունքի ամբիոնի ասիստենտ Ժ.Ստեփանյանի կազմած՝ «Նախադեպը քրեական իրավունքում» դասընթացի ծրագիրը:

8.2 ԼՍԵՑԻՆ. ԵՂՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ Քրեական իրավունքի ամբիոնի ասիստենտ Ժ.Ստեփանյանի կազմած՝ «Կրիմինալոգիական հետազոտությունների մեթոդիկա» դասընթացի ծրագիրը հաստատելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազիսյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՂՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ հաստատել Քրեական իրավունքի ամբիոնի ասիստենտ Ժ.Ստեփանյանի կազմած՝ «Կրիմինալոգիական հետազոտությունների մեթոդիկա» դասընթացի ծրագիրը:

8.3 ԼՍԵՑԻՆ. ԵՂՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ Քրեական իրավունքի ամբիոնի ասիստենտ Ա.Օսիկյանի կազմած՝ «Կոռուպցիայի կանխարգելման քրեաիրավական հիմնախնդիրները» դասընթացի ծրագիրը հաստատելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազիսյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՂՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ հաստատել Քրեական իրավունքի ամբիոնի ասիստենտ Ա.Օսիկյանի կազմած՝ «Կոռուպցիայի կանխարգելման քրեաիրավական հիմնախնդիրները» դասընթացի ծրագիրը:

8.4 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ Քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ Ս.Մեղրյանի՝ «Հայցի ապահովումը քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ Ս.Մեղրյանի՝ «Հայցի ապահովումը քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության:

8.5 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ Քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ Ս.Մեղրյանի՝ «Պարզեցված ընթացակարգերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում (գիտագործնական մեկնաբանություններ)» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ Ս.Մեղրյանի՝ «Պարզեցված ընթացակարգերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում (գիտագործնական մեկնաբանություններ)» վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության:

8.6 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ Քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ Ս.Մեղրյանի՝ «Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը» վերտառությամբ դասախոսության տեքստը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ «Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը» վերտառությամբ դասախոսության տեքստը երաշխավորել տպագրության:

8.7 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը՝ Քաղաքացիական դատավարության ամբիոնի ասիստենտ Վ.Գրիգորյանի՝ «Գաղտնի եղանակով կատարված լուսանկարների, ձայնագրությունների և տեսագրությունների թույլատրելիության հետ կապված խնդիրները քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ Վ.Գրիգորյանի՝ «Գաղտնի եղանակով կատարված լուսանկարների, ձայնագրությունների և տեսագրությունների թույլատրելիության հետ կապված խնդիրները քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ.Սուջյան

Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոն

Հ ա շ վ ե տ վ ու թ յ ու ն

2018-2019 ուս. տարում ամբիոնում կատարվող աշխատանքների մասին

1. Գիտական գործունեություն

Ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանք

ա) Ուսումնական պլան, ուսումնական ծրագրեր

Ամբիոնի անդամները դասավանդում են ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և միջազգային հարաբերությունների ֆակուլտետի բակալավրիատում և մագիստրատուրայում, ինչպես նաև տնտեսագիտական ֆակուլտետում, ԵՊՀ Եվրոպական հետազոտությունների կենտրոնի մագիստրատուրայում, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտում:

2018-2019 ուս. տարում ամբիոնը շարունակում է դասավանդումը ֆակուլտետի Մեթոդխորհրդի կողմից ներկայացված չափանիշների հիման վրա վերանայված ծրագրերով /թվով 20/, յուրաքանչյուր քննության և ստուգաքթի համար կազմվել են համապատասխան առարկաների հարցաշարերը:

բ) Մեթոդական աշխատանք

Ամբիոնի անդամների վերապատրաստման գործընթացում մեծ ուշադրություն է դարձվել դասավանդման առաջատար մեթոդիկաների ուսումնասիրությանը և գործնական հմտությունների ձեռքբերմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնում քննարկման առարկա են դարձել դասավանդման մեթոդիկայի բարելավումն ու նոր մեթոդների կիրառումը: Արդյունքում ամբիոնը ներդրեց գիտելիքների ստուգման նոր եղանակներ, հատկապես ընթացիկ քննությունների իրականացման գործընթացում: Նպատակը կայանում է նրանում, որ առավելագույնս հնարավորություն տրվի ուսանողներին ցուցադրել իրենց ունեցած իրական գիտելիքը և ստանալ օբյեկտիվ գնահատական:

Նկատի ունենալով, որ կրեդիտային համակարգի պայմաններում կարևորվում է ինքնուրույն աշխատանքի կատարումը, ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը որակով և ժամանակին պաշտպանության ներկայացնելու նպատակով ամբիոնն այդ ուղղությամբ ձեռնարկել է որոշակի աշխատանքներ: Հանձնարարվել է դասախոսներին առնվազն ամիսը մեկ անգամ հանդիպել ուսանողների հետ, ճշտել նրանց կողմից կազմված աշխատանքի պլանը, օգնել գրականության ցանկի պատրաստման և ընթացիկ հարցերում :

2018-2019 ու.ս.տարվա *երկրորդ կիսամյակի*՝ ուսանողության շրջանում անցկացրած հարցումների արդյունքում ամբիոնի միջին գնահատականը կազմում է 4.71 :

Գիտահետազոտական աշխատանք

Հոդված

1. Ա. Սարգսյան – Եվրասիական Տնտեսական Միության իրավանորմների կիրառման մեխանիզմները
2. Գ. Չոբանյան – Պետության սուվերենության հիմնախնդիրները արդի գլոբալացման պայմաններում

Մենագրություններ, ուսումնական ձեռնարկներ

1. Ք. Վարդանյան - Փախստականների միջազգային իրավական և ներպետական պաշտպանությունը, Ուսումնական ձեռնարկ, «Հայրապետ» հրատարակչություն, Երևան, 2018, 256 էջ
2. Ք.Վարդանյան - Փախստականների և ապաստան հայցողների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավական ակտերը և դրանց ազգային իրավական իմպլեմենտացիան, Մենագրություն, «ԵՊՀ» հրատարակչություն, Երևան, 2018, 144 էջ
3. В. Степанян - Особенности моделей формы государственного правления Армении: уроки бархатной революции, Lambert Akademik Publishing, 2018, 49 էջ

Ամբիոնում պարբերաբար նիստերի ընթացքում ներկայացվում են ամբիոնի անդամների հաղորդումները և գիտական զեկուցումները:

- **մասնակցություն գիտաժողովներին**

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնն ակտիվորեն մասնակցել է ՀՀ-ում և արտերկրում կազմակերպվող գիտաժողովներին և գիտահետազոտական ծրագրերին: 2018-2019 ուս. տարվա ընթացքում ամբիոնի անդամները մասնակցել են հետևյալ գիտաժողովներին.

1. Ասպիրանտների և հայցորդների տարեկան գիտական նստաշրջան, 2018թ. դեկտեմբերի 10-11, Երևան, ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ /մասնակցել են 2 ասպիրանտ, 1 հայցորդ/
2. Պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողով, 2018թ. դեկտեմբերի 12 ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ /մասնակցել է ամբիոնի ղեգենտ, ի.գ. թ Ա. Սարգսյան/
3. Ք. Վարդանյան - «Գենդերային և անչափահասների արդարադատությունը Մերձավոր Արևելքում» թեմայով խորհրդաժողով՝ կազմակերպված Կանադայի Կարլետոն համալսարանի կողմից ԵՊՀ-ի, Կարլետոնի համալսարանի և Կուֆայի համալսարանի միջև համագործակցության շրջանակներում, ապրիլի 25-29, Ստամբուլ, Թուրքիա
4. Ք. Վարդանյան - «Փախստականների իրավունք» խորագրով 8-րդ ամառային դպրոց՝ կազմակերպված ՄԱԿ ՓԳՀ-ի աջակցությամբ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի կողմից հայկական առաջատար բուհերի բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների մասնակցությամբ, հոկտեմբեր 19-21, 2018, Դիլիջան, Հայաստան:
6. Տ. Գրիգորյան - Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության ռազմատնտեսական համագործակցության միջպետական հանձնաժողովի 16-րդ նիստ, 2018թ. սեպտեմբերի 6-8, Ղազախստանի Ալմաթի քաղաք
7. Տ. Գրիգորյան - Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության կողմից կազմակերպված կիբերանվտանգության ոլորտում հետագա համագործակցությանը նվիրված միջազգային աշխատաժողով, 2018թ. հեկտեմբերի 11-12, Ռումինիայի Բուխարեստ քաղաք
8. Տ. Գրիգորյան - Ճանաչողական այց նվիրված Վրաստանում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի փորձի ուսումնասիրմանը, 2019թ. հունվարի 21-23, Վրաստանի Թբիլիսի քաղաք
9. Տ. Գրիգորյան - Ճանաչողական այց նվիրված ոստիկանական բաժանմունքներում հարցաքննությունների տեսաձայնագրման լավագույն փորձի

ուսումնասիրությանը, 2019թ. փետրվարի 12-16, Միացյալ Թագավորության Բելֆաստ քաղաք

2. Ուսումնական գործունեություն

Ասպիրանտների, հայցորդների հետ տարվող աշխատանք և կադրերի վերապատրաստում

Ամբիոնն ունի *1 առկա* ուսուցմամբ, *3 հեռակա* ուսուցմամբ ասպիրանտ և *1 հայցորդ*: Պարբերաբար քննարկվում են նրանց աշխատանքի ընթացքը, գիտական հոդվածները երաշխավորվում են տպագրության, այլ աջակցություն է ցուցաբերվում նրանց աշխատանքին: Ամբիոնի ասպիրանտներն ու հայցորդներն ակտիվորեն ներգրավված են նաև ուսումնական պրոցեսում:

Ուսանողների հետ տարվող աշխատանքներ

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակել է գործել միջազգային և եվրոպական իրավունքի գծով ձևավորված Ուսանողական գիտական ընկերությունը, որի շրջանակներում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ.

1. ապրիլի 27-ին միջոցառում-դասախոսություն Ցեղասպանության թանգարան ինստիտուտում “Հայոց ցեղասպանության միջազգային իրավական հիմնախնդիրները” թեմայով
2. ապրիլի 29-ից սկսած 1ամսվա ընթացքում սկսվում են “Ուսուցումը արտերկրում փորձի փոխանակում” գիտական հանդիպումների շարքը: Համագործակցություն է իրականացվում Չիկագո-Քենթ մագիստրոսական ծրագրի հետ /Իլինոյիսի համալսարան/:

Նախատեսվում է հաջորդ տարի մի շարք առարկաների քննությունների անցկացման համար կազմել խնդիրներ:

Ամբիոնի նախաձեռնությամբ մագիստրատուրայի առաջին կուրսում դասավանդվող “Դիվանագիտության ժամանակակից մոդելները” կամընտրական առարկան փոխարինվել է “Հայոց ցեղասպանության միջազգային իրավական հիմնախնդիրները” դասընթացով:

Իրավաբանական կրթության և պրակտիկայի ինտեգրում

Ամբիոնն ապահովում է առանձին դասընթացների շրջանակներում որոշակի թեմաներով ուսումնական գործընթացին դասավանդող դասախոսների հետ համատեղ պրակտիկ աշխատողների մասնակցությունը, առանձին դասընթացների շրջանակներում ուսումնասիրվում են պրակտիկ գործեր, ներառյալ՝ Եվրոպական դատարանի, Սահմանադրական դատարանի որոշումները: Մի շարք առարկաների ընթացիկ քննությունների տոմսերը ներառում են նաև պրակտիկայից հարցեր:

2018-2019 ուս. տարվա շրջանակներում Իրավաբանական կլինիկայում միջազգային իրավական մասնագիտացման շրջանակներում ընդգրկված են 2 ուսանող՝

1. Հովհաննիսյան Ժաննա
2. Շիրինյան Անդրանիկ

Վերոնշյալ ուսանողները մասնակցում են կլինիկայի գործունեությանը՝ անհրաժեշտ իրավաբանական ծառայություններ մատուցելով կլինիկայի հաճախորդներին, ինչպես նաև մասնակցում են «Իրավունք բոլորի համար» ծրագրին և ՄԱԿ ՓԳՀ-ի ու «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի հետ համագործակցության շրջանակներում այցելում են Երևանի ավագ դպրոցներ և դասախոսություններ են կարդում «Փախստականների իրավունք» թեմայով:

Կրթական ծրագրերի արդիականացում ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին համապատասխան

Ամբիոնի կողմից արդեն իսկ արդիականացվել է բակալավրիատի կրթական ծրագիրը, աշխատանքներ են տարվում մագիստրատուրայի կրթական ծրագրի կատարելագործման ուղղությամբ, որոնք կնպաստեն իրավական մտածողության, տրամաբանության, վերլուծական հմտությունների զարգացմանը:

Ուսումնական և ուսումնաօժանդակ նյութերի արդիականացում

Եվրոպական և միջազգային իրավունք մասնագիտացման դասընթացի շրջանակում ընդգրկված դասընթացների մեծ մասը ապահովված է հայալեզու գրականությամբ: Ամբիոնը աշխատանքներ է իրականացնում Միջազգային իրավունք նոր դասագրքի հրատարակման ուղղությամբ: Ուսումնական նյութերի կառուցվածքն ու բովանդակությունը արդիականացնելու, դրանց պահանջվածությունն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ամբիոնը նպատակ է հետապնդում մի շարք դասընթացների համար պատրաստել ուսումնական ձեռնարկներ, մենագրություններ:

Պրոֆեսորադասախոսական կազմի պրոֆեսիոնալիզմի կատարելագործում

Ամբիոնի հիմնական դասախոսները մասնակցում են ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման դասընթացներին:

Պրոֆեսորադասախոսական կազմի համալրում

Ամբիոնը միջոցներ է ձեռնարկում դասախոսական կազմի համալրման ուղղությամբ: Ամբիոնը սեմինար դասընթացներ վարելու հնարավորություն է ընձեռում նաև ամբիոնի ներկա ասպիրանտներին, ինչպես նաև ասպիրանտուրան արդեն ավարտած ասպիրանտներին՝ արդեն իսկ ժամեր տրամադրելով վերջիններիս:

Հեռակա բաժնում ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացում.

- դասընթացները համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով ապահովելու նպատակով թարմացվել և կայքում զետեղվել են առարկայական ծրագրերը, որոշ ուսումնական և ուսումնաօժանդակ նյութեր:

Արդահամալսարանական գործունեություն.

- ամբիոնի անդամ Վ. Քոչարյանը հանդիսանում է Եվրոպայի խորհրդի արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի անդամ, ԱՊՀ արդարադատության նախարարների խորհրդի աշխատանքային խմբի ղեկավար
- ամբիոնի անդամ Կ. Գևորգյանը հանդիսանում է GRECO պատվիրակության անդամ
- ամբիոնի անդամ Վ. Վարդանյանը հանդիսանում է Միջազգային և համեմատական իրավունքի կենտրոն, Ցեղասպանության հետազոտությունների միջազգային ստացացիայի անդամ:

Ամբիոնը մասնագիտական և կազմակերպչական աշխատանքներ է իրականացնում ուսանողների հետ միջազգային մի շարք մրցույթներին վերջիններիս մասնակցությունը ապահովելու նպատակով: Արդյունքում ուսանողները լավագույնս իրենց դրսևորել են հետևյալ մրցույթներում.

1. Ֆիլիփ Ջեսսափի անվան միջազգային հանրային իրավունքի մրցույթի ազգային փուլ, 2019թ. փետրվար – հաղթանակ /լավագույն թիմ, լավագույն գրավոր դիրքորոշում, լավագույն բանախոս մրցանակների շնորհում/ միջազգային փուլ 2019թ. ապրիլ – 76-րդ տեղ
2. Ժան Պիկտեի անվան մրցույթ /միջազգային մարդասիրական իրավունք/ - թիմը շուտով կստանա մրցույթի ժյուրիի կողմից կարծիք թիմի վերաբերյալ
ԿՄԽԿ Հայաստան միջբուհական դատախազ ՄՄԻ վերաբերյալ 2018թ. նոյեմբեր – ԵՊՀ Ինտելեքս թիմը ճանաչվել է հաղթող:

Ամբիոնի վարիչ՝

Վ. Ստեփանյան
19.04.2019թ.